ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

««ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-264-17.05.2022-ՄԻ-011/0) ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-264[1] -17.05.2022-ՄԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	*Կառավարություն*	««Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի (Կ-264-17.05.2022-ՄԻ-011/0) (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին հոդված	«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերնագրից հանել երկրորդ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը: Նախագծի 1-ին հոդվածում «Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) լրիվ անվանման հիշատակումից հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը:	Ընդունվել է	Առաջարկն ընդունվել է
2.	*Կառավարություն*	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 1-ին հոդվածը երկու կողմից ներառել չակերտներում:	Ընդունվել է	Առաջարկն ընդունվել է
3.	*Կառավարություն*	Նախագծի 5-րդ, 24-րդ, 34-րդ հոդվածներ	Այն դեպքերում, երբ կարգավորումը ենթադրում է քվորումի առկայությունը՝ Նախագծում «իրավազոր» բառը փոխարինել «իրավասու է (քվորում ունի)» բառերով:	Ընդունվել է	Առաջարկն ընդունվել է
4.	*Կառավարություն*	Նախագծի 6-րդ հոդված	Նախագծի 6-րդ հոդվածով փոփոխվող Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «դրանց» բառից հետո լրացնել «լրացումները կամ» բառերով:	Ընդունվել է	Առաջարկն ընդունվել է
5.	*Կառավարություն*	Նախագծի 8-րդ հոդված	Նախագծի 8-րդ հոդվածով փոփոխվող Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասից հանել 14-րդ կետը:	Ընդունվել է	Առաջարկն ընդունվել է
6.	*Կառավարություն*	Նախագծի 12-րդ հոդված	Նախագծի 12-րդ հոդվածում «131-րդ» բառը փոխարինել «13.1-րդ » բառով:	Ընդունվել է	Առաջարկն ընդունվել է
7.	*Կառավարություն*	Նախագծի 22-րդ հոդված	Նախագծի 22-րդ հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 36-րդ հոդվածի 3-րդ մասում «պարտավոր է» բառից հետո լրացնել «այդ հիմքերի ի հայտ գալուց հետո» բառերով:	Ընդունվել է	Առաջարկն ընդունվել է

8.	***Կառավարություն***	Նախագծի 22-րդ հոդված	Նախագծի 22-րդ հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 36-րդ հոդվածի 5-րդ մասից հանել «իր կողմից սահմանված կարգով» բառերը:	Ընդունվել է	Առաջարկն ընդունվել է
9.	***Կառավարություն***	Նախագծի 22-րդ հոդված	Նախագծի 22-րդ հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 36-րդ հոդվածի 8-րդ մասում «սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերը» բառերը փոխարինել «համապատասխան հիմքը» բառերով:	Ընդունվել է	Առաջարկն ընդունվել է
10.	***Կառավարություն***	Նախագծի 24-րդ, 24.1-րդ հոդվածներ	Նախագծի 24-րդ հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 6-րդ գլխի 39.1-ին հոդվածի 1-ին մասում ավելացնել նոր՝ 4-րդ կետ՝ «4) «Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքի եւ դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:»:	Ընդունվել է	Առաջարկն ընդունվել է
11.	***Կառավարություն***	Նախագծի 24-րդ հոդված	Նախագծի 24-րդ հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 6-րդ գլխի 39.5-րդ հոդվածի վերնագրից և 7-րդ մասից հանել «խորհրդի» բառերը:	Ընդունվել է	Առաջարկն ընդունվել է
12.	***Կառավարություն***	Նախագծի 26-րդ հոդված	Նախագծի 26-րդ հոդվածով Օրենքի 41-րդ հոդվածում լրացվող 7-րդ մասից «, դրանում լրացման ենթակա տվյալները և» բառերը փոխարինել «և լրացման» բառերով:	Ընդունվել է	Առաջարկն ընդունվել է
13.	***Կառավարություն***	Նախագծի 35-րդ,40-րդ հոդվածներ	Նախագծի 35-րդ հոդվածով փոփոխվող Օրենքի 45.5-րդ հոդվածի 1-ին մասում, Նախագծի 40-րդ հոդվածի 2-րդ մասում «ակադեմիա» բառը փոխարինել «դպրոց» բառով	Ընդունվել է	Առաջարկն ընդունվել է
14.	***Կառավարություն***	Նախագծի 40-րդ հոդված	Նախագծի 40-րդ հոդվածի 5-րդ մասից հանել «եւ կարգապահական վարույթի գործը փաստաբանների պալատի խորհրդի քննարկմանը նախապատրաստող անձանց լիազորությունները դադարում են համապատասխանաբար», «և կարգապահական հանձնաժողովի ձևավորման պահից» բառերը: Նախագծի 40-րդ հոդվածի 5-րդ մասում լրացնել նոր նախադասություն՝ «Կարգապահական վարույթի գործը փաստաբանների պալատի խորհրդի քննարկմանը նախապատրաստող անձանց լիազորությունները դադարում են մինչեւ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի ձեւավորումը հարուցված կարգապահական բոլոր վարույթները ավարտվելու պահից:»	Ընդունվել է	Առաջարկն ընդունվել է